ՔԱՂՎԱԾՔ

«Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի
03.05.2022թ.-ին կայացած արտահերթ նիստի N 10 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի բոլոր 9 անդամները:

Օրակարգ

1. 2022 թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն՝ համաձայն ներքոհիշյալ փաստաթղթերի.

ա/ Տարբեր առարկաներից դպրոցականների հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլերի հաղթողներին անվանական կրթաթոշակ տրամադրելու մասին ԿԳՄՍ նախարարի 22.04.2022 թվականի N 733-Ա/2 հրամանը

բ/ Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման մասին ՀՀ կառավարության 28.04.2022 թ.-ի թիվ 596-Ն որոշումը

Օրակարգի հարցի առաջին ենթակետի մասին խոսելիս զեկուցող Էլ. Թումանյանը ներկայացրեց ԿԳՄՍ նախարարի 22.04.2022 թվականի N733-Ա/2 հրամանը, որով նախատեսվում է 2022 թվականին մի շարք առարկաներից անցկացված դպրոցականների հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի հաղթողներին տրամադրվելու է անվանական կրթաթոշակ: Նա նշեց, որ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Գայանե Նալբանդյանը հանրապետական օլիմպիադայի եզրափակիչ փուլում հաղթող է ճանաչվել «Ռուսաց լեզու» առարկայից (1-ին տեղ), և ըստ վերոնշյալ հրամանի նրան կտրամադրվի 120.0 հազար դրամ՝ 1 տարվա ընթացքում /ամսական 10 հազար դրամ/:

Օրակարգի հարցի երկրորդ ենթակետի մասին խոսելիս զեկուցող Էլ. Թումանյանն անդրադարձավ ՀՀ կառավարության 28.04.2022 թվականի թիվ 596-Ն որոշմանը, համաձայն որի կամավոր ատեստավորում անցած, դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Սեդա Հայրապետյանի դրույքաչափը, սկսած 2022 թվականի մայիսի 22-ից սահմանվել է 200,0 հազ. դրամ. վերահաշվարկի արդյունքում գումարը դարձել է 2346,7 հազ. դրամ:

Նախահաշվում կատարվել են համապատասխան փոփոխությունները:

Հիմք ընդունելով տնօրեն Էլ. Թումանյանի զեկույցը՝ կառավարման խորհուրդը

Որոշեց

հավանություն տալ 2022թ.-ի եկամուտների և ծախսերի ճշտված նախահաշվին և այն ներկայացնել ԿԳՄՍՆ հաստատման:

Խորհրդի նախագահ՝ Ն. Ալավերդյան